

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

X342X  
Բ. Ա Տ Ա Խ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ-  
ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ




Պ Ե Տ Տ Ա Ր Ա Տ  
ՅԵՐԵՎԱՆ 1931

ՀՀ ՏԵՇ 2017

Ի. ԱՍՈԼԻՆ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԵՐ-  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՆՈՐ ԽՆԴՏՐՆԵՐ



ԳԵՂԱՐՔԱՆ

1931

ԵՐԵՎԱՆ

## ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ—ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՆԴԻԲՆԵՐ

(Ընկած Ստալինի նառը տնտեսավարմությանը)

ՊԵՏՈՒԱՏԻ ՏՈԱՐԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1753  
ԳԼԱՎԱԼԻՑ 6596 (Բ)  
ՊԱՏՎԵՐ 3937  
ՏԵՐԱՎ 10000



1-2926գր

Ընկերներ, խորհրդակցության նյութերից յիշեցվում ե, վոր պղանի կատարման տեսակետից մեր արդյունաբերությունը բավական խայտաբղետ պատկեր է ներկայացնում: Կան արդյունաբերության ճյուղեր, վորոնց արտադրանքն անցած 5 տարում անցյալ տարվանետ համեմատած աճել է 40—50 տոկոսով, կան ճյուղեր, վորոնք 20—30 տոկոսով ավելի չեն աճել: Ի վերջո, կան նաև առանձին ճյուղեր, վորոնք աճել են ընդամենը 6 տոկոսով կամ ավելի պակաս: Վերջինների թվին սկսած ե դասել ածխարդյունաբերությունը և սկ մետաղուրդիան: Ինչպես տեսնում եք, իրոք խայտարղեան պատկեր է: Ինչո՞վ բացարել այդ խայտարղեառությունը, վոր են ե արդյունաբերության մի քանի ճյուղերի հետ մնալու պատճառը, ի՞նչն ե պատճառը, վոր արդյունաբերության մի քանի ճյուղերում արտադրանքն աճել է միայն 20—25 տոկոսով, իսկ ածխարդյունաբերությունը և սկ մետաղուրդիան աճել են ավելի փոքր տոկոսով, գնում են մյուս ճյուղերի պոչից: Դրա պատճառն այն է, վոր վերջերս արդյունաբերության զարգացման պայմաններն արմատապես փոխվել են, ստեղծվել ենոր զրություն, վորը պահանջում է զեկավարության նոր պրիորներ, , իսկ մեր մի քանի տնտեսավարմությանը

ըը փոխանակ փոխելու աշխատանքի պրիոմները, դեռևս  
շարունակում են աշխատել հնի պես : Հետեւ բար  
դիրն այն է, վոր արդյունաբերության զարգացման նոր  
պայմանները նոր ձևով աշխատանք են պահանջում, իսկ  
մեր տնտեսավարները չեն հասկանում այդ, չեն տես-  
նում, վոր այժմ հարկավոր ե ղեկավարել նոր ձևով :

Այդ է պատճառը, վոր յետ են մնում մեր արդյու-  
նաբերության մի քանի ճյուղերը : Մեր արդյունաբե-  
րության բարձրացման ի՞նչ նոր պայմաններ են դրանք,  
վորտեղից առաջացան դրանք : Առնվազն վեց այդպիսի  
նոր պայման կա :

Քննենք այդ պայմանները :

## 1. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԸ

Խոսքը նախ և առաջ վերաբերում է ձեռնարկու-  
թյունը բանվորական ուժով ապահովելուն : Առաջ սո-  
վորաբար բանվորներն իրենք եյին գնում գործարաննե-  
րը, հետեւազես այդ գործում վորոշ չափով տիրում եր  
ինքնահոս : Իսկ այդ ինքնահոսը բղխում եր նրանից,  
վոր կար գործադրկություն, գյուղը շերտավորվում եր,  
կար աղքատություն և սովոր յերկյուղ, վորը մարդկանց  
գյուղից քաղաք եր քչում : Դուք հիշո՞ւմ եք «գյուղացու  
փախուստը գյուղից քաղաք» Փորմուլը, ինչն եր հար-  
կադրում գյուղացուն գյուղից քաղաք փախչել : Սո-  
վոր յերկյուղը, գործադրկությունը, այն, վոր գյուղը  
նրա համար խորթ մայր եր : Նա պատրաստ եր փախչել  
գյուղից թեկուզ դժոխք, միայն թե հնարավորություն  
ունենա մի գործ գտնելու : Այդպիս կամ համարյա այդ-  
պես եր գործը մեղանում մոտ անցյալում :

Կարելի յե արդյուք տաել, վոր մենք այժմ ձիշու-

նույն պատկերն ունենք : Վոչ, չի կարելի : Ընդհակառա-  
կը, ներկայում պայմաններն արմատապես փոխվել են,  
Յեզ վորովհետեւ պայմանները փոխվել են, մեզ մոտ  
այլքս բանվորական ուժի ինքնահոս չկա : Հատկապես  
ի՞նչ ե փոխվել վերջին ժամանակաշրջանում :

Նախ՝ մենք վերացրինք գործազրկությունը, հետե-  
վագես մենք վոչնչացրինք այն ուժը, վորը ճնշում եր  
«աշխատանքի շուկայի» վրա :

Յերկրորդ՝ մենք արմատապես կասեցրինք գյուղի  
շերտավորումը, հետևապես հաղթահարեցինք մասսա-  
յական այն աղքատությունը, վորը գյուղացուն գյուղից  
քաղաք եր քչում :

Երրորդ՝ մենք տասնյակ հաղարավոր տրակտոր-  
ներ հայթայթեցինք գյուղին, ջախջախեցինք կուլակին,  
կազմակերպեցինք կոլտնտեսություններ, գյուղացինե-  
րին հնարավորություն տվինք մարդավայել ապրելու և  
աշխատելու :

Այժմ գյուղն այլքս խորթ մայր անվանել չի կա-  
րել :

Յեզ վորովհետեւ այլքս չի կարելի խորթ մայր ան-  
վանել գյուղը, գյուղացին սկսեց մնալ գյուղում, այլքս  
նա «գյուղից քաղաք չի փախչում», այլքս բանվորական  
ուժի ինքնահոս չկա : Դուք տեսնում եք, վոր ներկա-  
յունս ստեղծվել ե միանդամայն նոր կացություն, ձեռ-  
նարկությունները բանվորական ուժով ապահովելու  
նոր պայմաններ :

Ի՞նչ ե բղխում դրանից :

Նախ՝ դրանից բղխում ե այն, վոր այլքս չի կարե-  
լի հույս գնել բանվորական ուժի ինքնահոսի վրա, հե-  
տեւապես ինքնահոսի «քաղաքականությունից» պետք ե  
անցնել արդյունարերության համար բանվորների կազ-

մակերպված հայվաքման քաղաքականությանը: Սակայն դրա համար կա միայն մի ուղի՝ տնտեսական կազմակերպությունների պայմանագրումը կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների հետ: Դուք գիտեք, վոր այդ ուղին վոտք են զբել արդեն մի քանի տնտեսական կազմակերպություններ ու կոլտնտեսություններ, և փորձը ցույց տվեց, վոր պայմանագրերի պրակտիկան լուրջ հաջողություններ ե տալիս թե կոլտնտեսություններին և թե արդյունաբերական ձեռնարկություններին:

Յերկրորդ՝ զբանից բղխում ե այն, վոր անհրաժեշտ և անհաղղաղ անցնել աշխատանքի ամենածանր պրոցեսների մեջնայացմանը, ամբողջ թափով զարգացնելով այդ դործը (անտառոյին արդյունաբերություն, շինարարություն, ածխարդյունաբերություն, տրանսպորտի ընունում և պարպումը, ու մետաղաձուլումը և այլն): Հարկավ այդ չի նշանակում, թե պետք ե թողնել ձեռքի աշխատանքը: Ընդհակառակը, ձեռքի աշխատանքը դեռ յերկար ժամանակ ամենալուրջ դեր ե խաղալու արտադրության մեջ: Սակայն այդ նշանակում ե, վոր աշխատանքի պրոցեսների մեջնայացումը մեղ համար այն նոր վճռական ուժն ե, առանց վորքի հնարավոր չե պահպաննել վոչ մեր տեմզը և վոչ ել արտադրության նոր մասշտաբը:

Մեղ մոտ դեռ քիչ չեն այնպիսի տնտեսավարներ, վորոնք «չեն համատում» վոչ մեջնայացմանը, վոչ ել կոլտնտեսությունների հետ կնքած պայմանագրերին: Դրանք այն տնտեսավարներն են, վորոնք չեն հասկանում նոր իրագրությունը, չեն ուղում աշխատել նոր ձեռք, հողոց են քաշում «հին, լավ ժամանակվա» համար, յերբ բանվորական ուժը «ինքն եր դնում» ձեռնարկություն: Ավելորդ ե ասել, վոր այդպիսի տնտեսա-

վարներն այնքան են հետու տնտեսական չինարարության նոր պայմանների առաջադրած նոր խնդիրներից, վորքան յերկինքը յերկրից: Նրանք, ըստ յերեսույթին կարծում են, վոր բանվորական ուժի ասպարիզում մեր հանդիպած դժվարությունները պատահական յերևույթ են, վոր բանվորական ուժի պակասությունը կվերանայած էսես ասած ինքնահօսով:

Դա մոլորություն ե, ընկերներ: Բանվորական ուժի դժվարություններն իրենք չեն կարող վերանալ: Նրանք կվերանան միմիայն մեր սեփական ջանքերի չնորդիլ:

Այդպիս ուրեմն՝ կազմակերպված ձեռով հավաքել բանվորական ուժը կոլտնտեսությունների հետ կնքած պայմանագրերի միջոցով, մեջնայացնել աշխատանքը այդ և մեր խնդիրը: Այդ վիճակի մեջ ե մեր արդյունաբերության զարգացման առաջին նոր պայմանը:

Անցնենք յերկրորդ պայմանին:

## 2. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Եես նոր խոսեցի մեր ձեռնարկությունների համար կազմակերպված ձեռով բանվորներ հավաքադրելու մասին: Սակայն բանվոր ճարել դեռ չի նշանակում ամեն ինչ անել: Մեր ձեռնարկությունները բանվորական ուժով առահօվելու համար, անհրաժեշտ և ամրացնել բանվորներին արտադրությանը և քիչ թե շատ ավելի մշտական գարձնել ձեռնարկության բանվորների կաղմը: Հաղիվ թե կարիք կա ապացուցելու, վոր առանց ունենալու արտադրության տեխնիկան քիչ թե շատ յուրացրած բանվորներ, մեխանիզմին քիչ թե շատ վարժված բանվորների մշտական կաղմ, հնարավոր չե առաջ շարժվել, հնարավոր չե կատարել արտադրական պլանները:

Հակառակ դեպքում հարկավոր կլիներ տմեն անգամ նորից սովորեցնել բանվորներին, ժամանակի կեսը մսինել նրանց սովորեցնելու համար, փոխանակ արտադրության համար ողափորձելու հակ իրականում ի՞նչ ե կատարվում այժմ մեղ մոտ: Կարելի՞ յե ասել, վոր ձեռնարկություններում բանվորների կազմը քիչ թե շատ մշտական է: Դժբախտաբար այդ չի կարելի ասել: Բնդհակառակը մեղ մոտ, ձեռնարկություններում գեռ մինչև այժմ ել կա բանվորական ուժի այսպես կոչված հոսունություն:

Դեռ ավելին՝ մի շարք ձեռնարկություններում բանվորական ուժի հոսունությունը վոչ միայն չի վերանում, այլ ընդհակառակին աճում և ուժեղանում է: Համեմայն զեստ դուք քիչ ձեռնարկություն կդանեք, վորակ բանվորական ուժի կազմը կես տարվա մեջ կամ նույնիսկ մի յեռամսյակում չփոխվի առնվազն 30—40 տոկոսով:

Առաջ, արդյունաբերության վերականգնման շրջանում, յերբ մեր տեխնիկական սարքավորումը բարդ ե արտադրության մասշտաբը փոքր, կարելի յերժի կերպ հանդուրժել բանվորական ուժի այսպես կոչված հոսունությանը: Այժմ այլ բան է: Այժմ իրերի դրությունն արմատապես փոխվել է:

Այժմ ծավալուն վերակառուցման շրջանում, յերբ արտադրությունը հասել է վիթխարի մասշտաբի, իսկ տեխնիկական սարքավորումը դարձել է վերին աստիճանի բարդ, բանվորական ուժի հոսունությունը մեր արտադրության համար դարձել է մի շարիք, վոր կազմալուծում և մեր ձեռնարկությունները: Այժմ «Հանգուրժել» բանվորական ուժի հոսունությունը նշանա-

կում ե քայքայել մեր արդյունաբերությունը, վոչնչացնել արտադրական պլանների կատարման հնարավորությունը, վերացնել արտադրանքի վորակը բարելավելու հնարավորությունը:

Վորո՞նք են բանվորական ուժի հոսունության պատճառները:

Աշխատավարձի սիալ կազմակերպումը, սիալ տարիի վեցին սիստեմը, աշխատավարձի «Ճախ» հավասարեցումը: Մի շարք ձեռնարկություններում աշխատավարձի դրույցները սահմանված են այնպես, վոր ծանր ութեթև աշխատանքի տարբերությունը համարյա ջնջվում է: Հավասարեցման հետեանքն ե այն, վոր վոչ վորակյալ բանվորը չի շահագրգուված վորակյաների կարգն անցնելու և արգախով զուրկ ե առաջ ընթանալու հեռանկարներից, ուստի նա իրեն «Ժամանակավոր» հյուր և զգում արտադրության մեջ և աշխատում և միայն նրա համար, վոր մի քիչ «փող աշխատի» և ապա զնա մի այլ տեղ «բախտ վորոնելու»: Աշխատավարձի հավասարեցման հետեանքն այն է, վոր վորակյալ բանվորը հարկադրված և ձեռնարկությունից-ձեռնարկություն անցնել, վորագեսպի գտնի վերջապես այն ձեռնարկությունը, վորտեղ կարող են ըստ արժանվույն գնահատել վորակյալ աշխատանքը: Դրանից և առաջանում «ընդհանուր» շարժումը ձեռնարկությունից-ձեռնարկություն, բանվորական ուժի հոսունությունը:

Զարիքը վոչնչացնելու համար պետք ե վերացնել հավասարեցումը, պետք ե կազմակերպել դրույցների այնպիսի սիստեմ, վոր նկատի առնվի վորակյալ և վոչ վորակյալ աշխատանքի, ծանր և թեթև աշխատանքի տարբերությունը: Զի կարելի հանգուրժել, վոր սև մետաղագործության ասպարիզում բանվորն ստանա նույն

քան, վորքան ավելողը: Զի կարելի հանդուբժիկ, վոր յերկաթուղային տրանսպորտի մեջնավարն ստանանույնքան, վորքան արտադրողը:

Մարզը և Լենինն ասում են, վոր վորակյալ և վոչ վորակյալ աշխատանքների տարբերությունը գոյաւթյան և ունենալու նույնիսկ սոցիալիզմի ժամանակ, նույնիսկ դասակարգելով վոչնչացվելուց հետո, վոր միայն կոմունիզմի ժամանակ կվերանա այդ տարբերությունը, ուստի նույնիսկ սոցիալիզմի ժամանակ «աշխատավարձը» պետք և տրվի ըստ աշխատանքի և վոչ թե ըստ պահանջի:

Սակայն մեր տնտեսական և արհմիութենական «հավասարաբները» համաձայն չեն դրան: Նրանք յենթադրում են, վոր մեր խորհրդային կարգերում տարբերությունն արդին վերացել է: Ո՞վ և իրավացի, Մարզն ու Լենինը, թե «հավասարաբները»: Պետք է յենթադրել, վոր այժմ ով դրույթային սիմտեմը հիմնում է հավասարեցման «սկզբունքի» վրա, առանց հաշվի ադնելու վորակյալ ու վոչ վորակյալ աշխատանքների տարբերությունը, խղում և իր կապը մարքսիզմից, խղում և լենինիզմից:

Արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղում, յուրաքանչյուր ճենարկության մեջ յուրաքանչյուր ցեխում կան քիչ թե շատ վորակյալ բանվորների առաջավոր խմբակներ, վորոնց նախ և առաջ ու գլխավորապես պետք և ամբացնել արտադրությանը, յեթե մենք ուղղում ենք իրաք աղահովել բանվորների մշտական կազմը ճենարկության մեջ: Նրանք, բանվորների այդ առաջատար խմբակները, կազմում են արտադրության հիմնական ողակը: Ամբացնել նրանց ճենարկությա-

նը, ցեխին, նշանակում ե ամրացնել բանվորների ամրող կազմը, հիմքից կասեցնել բանութի հոսունությունը:

Իսկ ինչպես ամրացնել նրանց ճենարկությանը: Նրանց կարելի յե ամրացնել միմիայն առաջ քաշելով դեպի վեր, բարձրացնելով նրանց աշխատավարձի մակարդակը, կազմակերպելով աշխատավարձն այնպես, վոր արժանի գնահատություն տրվի աշխատողի վորակյալում:

Իսկ ի՞նչ և նշանակում առաջ քաշել դեպի վեր, և բարձրացնել նրանց աշխատավարձի մակարդակը: Այդ, բացի մյուս բոլորից, նշանակում է հեռանկար բանալ վոչ վորակյալ բանվորների առաջ, իթանել նրանց դեպի վեր ընթանալու, վորակյաների կարդն անցնելու:

Դուք ինքներդ գիտեք, վոր այժմ մեղ անհրաժեշտ են միլիոնավոր վորակյալ բանվորներ: Սակայն վորակյալ բանվորներ ստեղծելու համար պետք է մղում տալ, հեռանկար տալ չվարժված բանվորներին՝ առաջ դնալու, դեպի վեր ընթանալու: Եեվ վորքան ավելի համարձակ վութք գնենք մենք այդ ուղին, այնքան ավելի լավ, վորովհետեւ այդ և բանվորական ուժի հոսունությունը վերացնելու հիմնական միջոցը: Իսկ ինայողություն անել այդ դործում, նշանակում է հանցանք գործել, գնալ մեր սոցիալիստական ինդուստրիալի շահերի դեմ:

Սակայն այդ դեռ բոլորը չե:

Բանվորներին ճենարկությանն ամրացնելու համար անհրաժեշտ է ել ավելի բարելավել բանվորների ապրանքավորումը, նրանց բնակարանային պայմանները:

Զի կարելի ժխտել, վոր վերջին ժամանակներս քիչ

բան չի արված՝ բանվորների բնակարտնային շինարարության և հայթայթման ասպարիզում։ Սակայն մինչեւ այժմ արվածը շատ քիչ է բանվորների արագորեն աճող պահանջներին բավարարելու համար։ Զի կարելի հենվել այն հանդամանքի վրա, վոր առաջ բանվորներին ապրանք հայթայթելու գործն ավելի վատ եր, քան այժմ, վոր այդ հիման վրա կարելի յեւ բավարարվել գոյություն ունեցող դրությամբ։

Միմիայն վատած, մինչեւ ուղին ու ծուծը նեխված մարդիկ կարող են միմիթարվել անցյալը մատնանշելով։ Պետք է յելակեա ունենալ վոչ թե անցյալը, այլ բանվորների ներկայիս հարածուն պահանջները։ Պետք է հասկանալ, վոր մեզ մոտ արմատապես փոխվել են բանվորի գոյության պայմանները։ Այժմ բանվորն այն չեւ, ինչ առաջներում, ներկայումս բանվորը, մեր խորհրդային բանվորը ուղում է ասդեմ, բավարարելով իր բոլոր նյութական ու կուլտուրական պահանջներին, պարենավորման խմաստով, բնակարանային խմաստով, կուլտուրական և այլ տեսակ բոլոր պահանջների բավարարման խմաստով։ Նա իրավունք ունի դրան և մենք պարտավոր ենք ապահովել նրա համար այդ պայմանները։

Ճեխտ ե, մեզանում նա չի տուժում գործազրկությունից, նա աղաստ և կապիտալիզմի լծից, նա այլև իր գործի ստրուկը չեւ, այլ տերը։ Սակայն այդ քիչ ե, նա պահանջում է բավարարել իր բոլոր նյութական և կուլտուրական պահանջները։ Մենք պարտավոր ենք կատարել այդ պահանջը։ Մի մոռանաք, վոր այժմ մենք ինքներս վորոշ պահանջներ ենք առաջադրում բանվորին, պահանջում ենք նրանից աշխատանքային

կարդասահություն, լարված աշխատանք, սոցմրյում ու հարվածայնություն։ Մի մոռանաք, վոր բանվորների հսկա մեծամասնությունը մեծ խանդավառությամբ ընդունեց Խորհրդային իշխանության այլ պահանջները և կատարում և վերջիններս հերոսաբար։ Ուստի մի զարմանաք, վոր կատարելով Խորհրդային իշխանության պահանջները, բանվորներն իրենց հերթին որա փոխարեն պահանջներու յեն կատարել մեր ստանձնած սպարտավորությունները՝ եւ ավելի բարելավել նրանց նյութական և կուլտուրական դրություննը։

Աւրեմն, վերացնել բանվորական ուժի հոսունությունը, վոչնչացնել «հավասարեցումը», նիշտ կազմակերպել աշխատավարձը, բարելավել բանվորների կենցաղային պայմանները— այս և մեր խնդիրը։

Այս վիճակի մեջ և մեր արդյունաբերության զարգացման յերկրորդ նոր պայմաննը։

Անցնենք յերրող պայմաններ։

### Յ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Վերեվում յես ասացի, թե անհրաժեշտ է վերացնել բանվորական ուժի հոսունությունը, ամբացնել բանվորներին ձեռնարկությանը։ Սակայն բանվորների ամրացումով չի սպառվում ամբողջ գործը։ Քիչ է վոչնչացնել հոսությունը։ Պետք է բանվորներին զնել աշխատանքի այնպիսի պայմանների մեջ, վորոնք հնարավորություն տան նրան կարգին աշխատելու, բարձրացնելու արտադրականությունը, բարելավելու արտադրանքի վորակը։ Հետեւլավես պետք է ձեռնարկություններում աշխատանքը կազմակերպել այնպես, վոր արտադրակա-

Նությունը բարձրանա ամսեամիս, յեռամսյակից-յեռամսյակ:

Կարելի՞ յե արդյոք ասել, վոր մեր ձեռնարկություններում աշխատանքի ներկա կաղմակերպությունը փոստորեն համապատասխանում ե արտադրության ժամանակակից պահանջներին: Դժբախտաբար վոչ: Համենայն դեպս մենք մինչեւ այժմ ել ունենք ձեռնարկություններ, վորտեղ աշխատանքի կաղմակերպությունը չափաղանց վատ հիմքի վրա յե դրված, վորտեղ կարդ ու կանոնի, համաձայնեցված աշխատանքի փոխարեն տեղի ունի անկարգություն, խառնաշփոթություն, վորտեղ աշխատանքի պատասխանատովության զգացմունքի փոխարեն՝ կատարյալ անպատասխանատվություն և դիմագրկություն:

Ի՞նչ ե դիմագրկությունը:

Դիմագրկությունը հանձնված աշխատանքի համար վորեւե պատասխանատվության բացակայությունն ե, մեքենաների, դաշտյանների, գործիքների համար պատասխանատվության բացակայությունն ե:

Հասկանալի յե, վոր դիմագրուկ տշխատանքի պայմաններում խոսք չի կարող լինել աշխատանքի արտադրականությունը լրջորեն բարձրացնելու, արտադրականքի վորակը բարելավելու, մեքենաներին, դաշտյաններին գործիքներին խնամքով վերաբերվելու ժամանքն: Դուք դիմաք, թե ի՞նչ արդյունք ունեցավ դիմագրեկությունը յերկաթուղարքին տրանսպորտում: Նա նույն արդյունքն ե տալիս արդյունաբերության մեջ:

Մենք յերկաթուղարքին տրանսպորտում վոչնչացրինք դիմագրեկությունը, բարձրացրինք նրա աշխատանքը: Մենք նույնը պետք անենք արդյունաբերություն-

թյան մեջ, նրա աշխատանքն ավելի բարձր առավելանի հասցնելու համար:

Առաջ կարելի յեր մի կերպ «հաշտվել» աշխատանքի այդ սխալ կազմակերպման հետ, վորը հեշտությամբ պահպանում ե իր գոյությունը դիմագրեկության կողքին, յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվության բացակայության հետ՝ ավել կոնկրետ աշխատանքի համար:

Այլ բան ե այժմ: Այժմ միանդամայն տարբեր են պայմանները: Արտադրության ներկա վիթխարի մասըշտաբի պայմաններում, հսկա ձեռնարկությունների գոյության պայմաններում, դիմագրեկությունն արդյունաբերության այն չարիքն ե, վորը վտանգ ե սպառնում ձեռնարկություններում մեր ձեռք բերած արտադրական և կաղմակերպչական բոլոր նվաճումներին:

Ի՞նչպես կարող եր արմատանալ դիմագրեկությունը մի շաբթ ձեռնարկություններում: Նա ձեռնարկությունն ատավ, վորպես անընդհատի ապորինի ուղեկիցը:

Սխալ կիրակ ասել, թե անընդհատ աշխատանքն անպայմանորեն իր հետ բերում ե դիմագրեկությունն արդյունաբերության մեջ: Յեթե աշխատանքը ճիշտ կազմակերպվի, յեթե սահմանվի յուրաքանչյուրի պատասխանատվությունը վորոշ աշխատանքի համար, յեթե բանվորների վորոշ խմբեր ամբացվեն մեխանիզմներին, դաշտյաններին, յեթե հերթափոխությունը ճիշտ կաղմակերպվի այնպես, վոր հերթերը իրենց հատկությամբ և վորակավորումով չգիշեն իրար— այս պայմաններում՝ անընդհատ աշխատանքը կտուաշխատանքի համար:

բի արտադրականության հակա անում, աշխատանքի վորակի լավացում, դիմադրկության վոչնչացում:

Այլպես և որինակ՝ գործը յերկաթուղային տրամադրութուամ, վարտեղ այժմ գոյություն ունի անընդհատը, սակայն դիմացքիւթյուն չկա այլեւս։ Կարելի՞ յետել, վոր արդյունաբերական ձեռնարկություններում, մենք նույնպիսի նպաստավոր պատկեր ունենք անընդհատի վերաբերմաժը։ Դժբախտաբար այդ չեւ կարելի ասել։ Բանն այն է, վոր մեզ մոռ, մի շարք ձեռնարկություններ անընդհատի անցան չափազանց հասպես, ուսանց համապատասխան պայմաններ նախալարդացատելու, առանց պատշաճ չափով, քիչ թե շատ համարինք վրաքաղիւթյուններ կազմակերպելու, առանց յուրաքանչյուրի վրա պատասխանատվություն դնելու տվյալ կրնկընետ աշխատանքի համար։ Իսկ դրա հետեւլանքն այն յեղալ, վոր տարերքի կամքին թողնը ված անընդհատը վերածվեց դիմացքիւթյան, զրանորհել մի շարք ձեռնարկություններում մենք ունենք թղթի ու խոսքերի անընդհատ և վոչ թղթի, այլ իրական դիմացքիւթյուն։ Պատասխանատվության զգացմունքի սպակառության չնորհել, աշխատողներն անխընամ վերաբերմունք են ցույց տալիս մեջնաներին, դազդյանները կոտրվում են մասսայաբար, բացակայում եւ աշխատանքի արտադրականութույնը բարձրացնելու աղղակը։ Զուր չեւ, վոր բանվորներն ասում են՝ «Մենք աշխատանքի արտադրականությունը կրարձրացնենք, գործը կկանոնակորեցինք, սակայն ո՞վ կը գնահատի մեղ, յերբ վոչ վոչ մի բանի համար պատասխանատու չե»։ Դրանից բղխում եւ, վոր մեր ընկերներից նրանք, վորոնք չոտպեցին մտցնել անընդհա-

ար, և եղաթյուրեցին վերջինս, վերածելով սրան դիմադրկության :

Ս.Ա. զըսությունը վերացնելու, դիմագրկությունը  
վոչչացնելու, համար յերկու յելք կամ այնպես  
փոխել անընդհատի կիրառման պայմանները, վոր նա  
դիմագրկության չվերածվի, ենչպես կատարվեց յեր-  
կաթուղային արանսպորտի առաջընթացը։ Կամ, վոր-  
աեղ այժմ նույստավոր պայմաններ չկան այդպիսի  
փորձի համար, մի կողմ թողնել թվթե անընդհատը,  
անցնել ժամանակավորապես Եռոքյա անընդհատի, ինչ-  
ուես արել են վերջերս Ստալինովագի տրակտորային  
գործարանում, պայմաններ նախապատրաստել, վոր  
հետադայում հնարավոր լինի անցնել իրավան և վոչ  
թղթե անընդհատի, վերադառնալ անընդհատի, առանց  
դիմագրկության։

UJL JLPE LKw:

Տարակույս չի կարող լինել, վոր մէկը տնտեսակարները լավ են հասկանուած այդ: Սակայն նրանք լուսուամ են: Ի՞նչու: Յերեվի այն պատճառով, վոր վախենուամ են հմարությունից:

Սակայն այդ վո՞ր սրվանից է, վո՞ր բայցեւիկները  
վախենում են ճշմարտությունից : Մի՞թե ճիշտ չէ, վո՞ր  
մի շարք ճեռնարկություններում անընդհատը վերածվեց  
գլխաղղկության, վո՞ր անընդհատը անընդհատը խեղա-  
թյուրվեց ծայր աստ ճամ :

Հարց է, ծաղութ, մարդկան այլպիսի անընդ-  
հատը: Ո՞վ համաձնիութեան առնենա ասելու, թէ  
արդ խեղաթյուր պահպանման  
շահերն ավելի բարձր են, քան աշխատանքի ճիշտ կազ-  
մակերպման շահերը, աշխատանքի արտադրուկանության

բարձրացման շահերը, իսկական անընդհատի շահերը,  
մեր սոցիալիստական արդյունաբերության շահերը:  
Միթե պարզ չե, վոր վորքան շուտ թաղենք թղթե ան-  
ընդհատը, նույնքան ավելի շուտ կհաջողվի մեջ կազ-  
մակերսի իրական և վոչ թղթե անընդհատ:

Մի քանի ընկերներ կարծում են, վոր դիմագրո-  
կությունը կարելի յէ վոչնչացնել անեծքներով և մեծա-  
ռըզորդ ճառերով: Յես, Համենայն դեպո, գիտեմ մի  
քանի տնտեսավարներ, վորոնք պայքար մզելով դե-  
մազրկության դեմ, սահմանափակվում են նրանով,  
վոր ժողովներում անեծքներ են կարդում դիմագրկու-  
թյանը, ըստ յերեխութիւն յենթալբրելով, վոր այլպիսի  
ճառերից հետո դիմազրկությունը կանչետանք ինքն  
իրեն, այսպես ասած ինքնահոսի կարդով:

Նրանք մեծ մոլորության մեջ են ընկնում, յեթե  
կարծում են, վոր դիմագրությունը կյանքից կարելի  
յէ դուրս մզել ճառերով ու անեծքներով: Վո՞չ, ընկեր-  
ներ, դիմազրկությունն ինքն իրեն չի անհետանա:  
Մենք կարող ենք վոչնչացնել նրան միմիայն ինքներս,  
վորովհետեւ մենք ճեղ հետ միասին պատասխանառու-  
յենք ամեն բանի համար, ներառյալ նաև դիմազրկու-  
թյան համար: Յես կարծում եմ, ա վոր ավելի բավ կլի-  
ներ, յեթե մեր տնտեսական զեկավարները փօխանակ  
ճառերով ու տրաունչներով զբաղվելու, մեկ-յերկու-  
տիս նստելին հանքահորում կամ գործարանում, ու-  
սումնասիրելին աշխատանքի կազմակերսման «ման-  
րունքները», բոլոր մանրամասնությունները, վոչնչաց-  
նելին իրավես դիմազրկությունը և ապա տվյալ ճեռ-  
արկության փորձը տարածելին մյուս ճեռարկու-  
թյուններում: Այդ շատ ավելի բավ կլիներ: Դա կլիներ

իսկական պայքար դիմագրկության դեմ, պայքար աշ-  
խառնքի ճիշտ բայլչելիկայն կազմակերպման հա-  
մար, պայքար ճեռարկության մեջ ուժերի կանոնավոր  
դաստիգման համար:

Այդպիս ուրեմն, վերացնել դիմագրկությունը, բա-  
րելանի աշխատանքի կազմակերպումը, նիշտ բաշխել  
ուժերը ճեռարկության մեջ— այս ե խնդիրը:

Այդ վիճակի մեջ և մեր արդյունաբերության զար-  
գացման յերրորդ նոր պայմանը:

Անցնենք այժմ չորրորդ պայմանին:

#### 4. ԲԱՆՎՈՐ ԴԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ— ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՀԱՐՑԸ

Փոխարք են պայմանները նաև առհասարակ արդյու-  
նաբերության հրամանատարական կազմի և մասնա-  
վորապես խեժներատեխնիկական անձնակազմի վերա-  
բերմամբ:

Առաջ մեղ մոտ գործն այսպիսի վիճակումն եր,  
վոր մեր ամբողջ արդյունաբերության հիմնական աղ-  
բյուրն եր Ռէկրայինայի ածխամետաղածուլական բա-  
զան: Ռէկրայինան մետաղ եր Հայթայթում մեր բոլոր  
արդյունաբերական չըշանհերին՝ թե՛ Հարավային, թե՛  
Մոսկվային և թե՛ Լենինգրագին: Դարձյալ նա յեր, վոր  
ածուխ եր հայթայթում ԽՍՀՄ-ի բոլոր Հիմնական  
ճեռարկություններին: Այսուղի յես բացառում եմ Ռւ-  
բալը, վորովհետեւ նրա տեսակարար կշիռը, Համեմա-  
տած Դոնբասի հետ, անհշան մեծություն եր ներկայա-  
ցնում: Դրա համապատասխան մենք ունեցինք արդյու-  
նաբերական հրամանատարական կազմ պատրաստելու  
յերեք հիմնական ոջախ՝ Հարավ, Մոսկվայի շրջանը, Լե-

նինդրադի շրջանը։ Հասկանալի յէ, վոր իրերի այբ  
ողայմաններում մենք կարող ենք այսպես կամ այն-  
պես բալարարվել ինժեներա-տեխնիկական այն նվա-  
ղագույն ուժերով, վորոնք ուներ մեր յերկիրը։

Այդպես եր մոտ անցյալում։

Բայց այժմ գոյություն ունեն միանգամայն տար-  
բեր պայմաններ։ Այժմ յես կարծում եմ պարզ ե, վոր  
սկահանելով զարգացման ներկայիս տեմպը, որտե-  
ղության վիթխարի մասշտաբը, մենք արդեն չենք  
կարող մեր դործն առաջ տանել միմիայն Ռւկրայինայի  
ածխամետաղաձուլական բաղայով։ Մենք դիմենք,  
վոր Ռւկրայինի ածուխն ու մետաղն արդեն հերիք  
չեն մեղ, չնայած դրանց արտադրության աճմանը։  
Դուք դիմեք, վոր մենք այդ սկամճառով հարփերված  
ենք ածխամետաղաձուլական նոր բազա ստեղծել Արե-  
վելքում և Ռւբալում, Կուռնեցիկ ավաղանում։ Դուք  
դիմեք, վոր մենք հաջողությամբ ենք ստեղծում այդ  
բազան։

Սակայն այդ քիչ ե։ Մեղ անհրաժեշտ ե նաև մե-  
տաղաձուլություն ստեղծել Սիրիում, նրա աճող պա-  
հանջներին բավարարելու համար։ Մենք արդեն ստեղ-  
ծում ենք այդ ճյուղը։ Բացի դրանից, մեղ հարկավոր  
ե գունդավոր մետաղաձուլման նոր բազա ստեղծել Ղա-  
պախոստանում, Թուրքիաստանում։ Մեղ անհրաժեշտ ե  
վերջապես դարձացնել յերկաթուղային ամենալայն շի-  
նարարություն։ Այդ թերագրում են ամբողջ ԽՍՀՄ-ի  
շահերը, ծայրերկրացին հանրապետությունների, ինչ-  
պես նաև կենարոնի շահերը։

Բայց դրանից հետեւում ե, վոր մենք արդեն չենք  
կարող բալարականալ արդյունաբերության ինժեներա-

տեխնիկական և հրամանատարական ուժերի այն մի-  
նիմալով, վորով մենք յուլա ելինք գնում առաջ։

Դրանից հետեւում ե, վոր այժմ բավական չեն ին-  
ժեներա-տեխնիկական ուժերի ձեվակերպման հին և  
ջախները, վոր անհրաժեշտ ե ստեղծել նոր ոջախների  
մի ամբողջ ցանց, Ռւբալում, Սիրիում, Միջին Ասիա-  
յում։

Այժմ մեղ անհրաժեշտ ե ապահովել մեղ արդյու-  
նաբերության ինժեներա-տեխնիկական հրամանատա-  
րական ուժերի յերեք—հինգ անգամ ավելի թվով, յեթե  
մենք իրոք մտադիր ենք իրականացնել ԽՍՀՄ-ի սոցիա-  
լիստական ինդուստրացման ծրագիրը։ Սակայն մեղ  
պետք են վոչ վորմեծ տեսակի հրամանատարական ինժե-  
ներա-տեխնիկական ուժեր։ Մեղ հարկավոր են հրամա-  
նատարական, ինժեներա-տեխնիկական այնպիսի ու-  
ժեր, վորոնք ընդունակ լինեն հասկանալու մեր յերկրի  
բանվոր դասակարգի քաղաքականությունն, ընդու-  
նակ լինեն յուրացնելու այդ քաղաքականությունը,  
պատրաստ լինեն խղճի մատօք իրականացնել այդ քաղա-  
քականությունը։

Իսկ ի՞նչ ե նշանակում այդ։ Այդ նշանակում ե,  
վոր մեր յերկրը թեվակոխել ե դարդացման այն վու-  
լու, յերբ բանվոր դասակարգը պիտի և ըստեղծի սեփա-  
կան արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա՝ ըն-  
դունակ պաշտպանելու նրա շահերն արտադրության  
մեջ, վորպես աիրապետող դասակարգի շահերը։ Վայ-  
սի տիրապետող դասակարգ չի բավարարվել առանց իր  
սեփական ինտելիգենցիայի։ Վոչ մի հիմք չկա տարա-  
կուսելու, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը նույնակա-  
չի կարող բավարարվել առանց իր սեփական արտադրա-

կան տեխնիկական ինտելիգենցիայի : Խորհրդային եշ-  
խանությունը հաջող առաջ այդ հանդամանքը, և բան-  
վոր դասակարգից դուրս յեկած մարդկանց առաջ բա-  
ցեց ժողովրդական անտեսության բոլոր ճյուղերի  
բարձրագույն ուսումնական հաստատությունները : Գուք  
դիտեք, վոր տաճնյակ հաղարավոր բանվոր ու դյա-  
ղացի յերիտասարդներ սովորում են այժմ բարձրա-  
գույն ուսումնական հաստատություններում : Յեթե տ-  
աջ, կապիտալիզմի ժամանակ, բարձրադրույն ուսում-  
նական հաստատություններն աղաների զավակների մե-  
նաշնորհն ելին, ապա այժմ խորհրդային կարգերում,  
բանվոր և դյուղացի յերիտասարդներն այնտեղ կադ-  
մում են տիրապետող ուժը : Տարակույս չկա, վոր  
շուտով մենք ուսումնական հաստատություններից  
կտանանք մեր արդյունաբերության հաղարավոր նոր  
համանատարներ՝ հաղարավոր տեխնիկներ ու ինժե-  
ներներ :

Սակայն դա գործի մի կողմն և միայն : Գործի  
մյուս կողմն այն ե, վոր բանվոր դասակարգի արտա-  
դրական-սեփական ինտելիգենցիան կազմելու յի  
վոչ միայն բրձրագույն գվարոցն անցած մարդկանցից,  
այլ հավաքադրվելու յենակ մեր ձեռնարկությունների  
գործնական աշխատողներից, վորակյալ բանվորներից,  
գործարանում, հանքահորում բանվոր դասակարգի ու-  
նեցած կուլտուրական ուժերից : Մըսության նախաձեռ-  
նողները, հարվածային բրիգադների զեկավարները,  
աշխատանքային խանութավառություն ներշնչողները, վե-  
նարարության այս կոմ այն բնակովառում աշխատաք-  
ըը կազմակերպողները, ահա բանվոր դասակարգի այն  
նոր խավը, վորը բարձրագույն դաշտոցն անցած ընկեր-

ների հետ միասին, աետք և կաղմի բանվոր դասակար-  
գի ինտելիգենցիայի կորիզը, մեր արդյունաբերության  
հրամանատարական կազմի կորիզը : Մեր խնդիրն ե, մի  
կողմ չերել նախաձեռնության վոգով համակած այլք  
ընկերներին, ավելի համարձակորեն առաջ քաշէլ նրանց  
հրամանատարական պաշտոնների, հնարավորություն  
տալ նրանց հայտաբերելու իրենց կազմակերպչական  
ընդունակությունները, հնարավորություն տալ նրանց  
լրացնելու իրենց գիտությունները, համապատասխան  
պայմաններ ստեղծել՝ առանց փող խնայելու :

Այդ ընկերների մեջ քիչ չեն նաև անկուսակցա-  
կանները : Սակայն դա չի կարող արգելք ծառայել նը-  
րանց զեկավար պաշտոնների համար առաջ քաշելու,  
ընդհակառակը, Հատկապես նրանց, այդ անկուսակցա-  
կան ընկերներին, Հարկավոր և առաջ քաշէլ հրամանա-  
տարական պաշտոնների համար, վորակեսղի նրանք հա-  
մոզվեն, թե կուսակցությունն իրոք զիտե գնահատել  
ընդունակ տաղանդավոր աշխատողներին : Մի քանի  
ընկերներ կարծում են, վոր գործարներում զեկավար  
պաշտոնների համար կարելի յե առաջ քաշէլ միմիայն  
կուսակցական ընկերներին : Այդ հիման վրա նրանք մի  
կողմն են Հրում Հաճախ ընդունակ, նախաձեռնող, ան-  
կուսակցական ընկերներին, առաջին տեղն առաջ քաշե-  
լով թեկուզ ավելի քիչ ընդունակ, վոչ նախաձեռնող  
կուսակցականներին : Ավելորդ ե ասել, վոր չկա ավելի  
հիմար, ավելի ուսակցիոն, թույլ տվեք ասել, «քայլա-  
քականություն» : Հաղիվ թե հարկ լինի ապացուցելու,  
վոր այլպիսի «քաղքականությամբ» կարելի յե միայն  
վարկարեկել կուսակցությունը, մի կողմ հրել անկու-  
սակցական բանվորներին կուսակցությունից : Մեր քա-

զաքականությունն այն է, վոր կուսակցական և ան-  
կուսակցական բանլորների մեջ դոյություն ունենա-  
«փոխաղարձ վատահության» մթնոլորտ, «փոխաղարձ  
ստուգման» մթնոլորտ (ԱԵԲԲ): Մեր կուսակցությու-  
նը բանվոր գասակարգի մեջ ուժեղ է ի միջի այլոց այն  
պատճառով, վոր նա հենց արդպիսի քայլաքականու-  
թյուն է վարում:

Այլպես ուրեմն՝ ջանալ, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դա-  
սակարգն ունենա իր սեփական արտադրական-տեխնի-  
կական ինստելիգենցիան, այդ և խնդիրը: Այդ և մեր  
արդյունաբերության զարգացման չորրորդ նոր պայ-  
մանը:

Անցնենք հինդերորդ պայմանին:

### 5. ՇՐՋԱԴԱՐՁԻ ՆՇԱՆՆԵՐ ՀԻՆ ԱՐՏՈՒՐԱ- ԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՄԵԶ ԿԱՆ

Հարցն այլ կերպ է դրվում նաև հին բուրժուական  
արտադրական տեխնիկական ինտելիգենցիայի վերա-  
րերմամբ: Յերկու տարի առաջ հին տեխնիկական ին-  
տելիգենցիայի ամենից ավելի վորակյալ մասը վարակ-  
ված եր վնասարարության հիվանդությամբ: Դեռ ա-  
ված վելին՝ վնասարարությունն այն ժամանակ մի տեսակ  
մոռա յեր: Մի քանիսը վնասում ելին, մյուսները՝  
թագցնում ելին վնասարարներին, վորանք ել լվանում  
ելին իրենց ձեռքը— չեղոքություն ելին պահպանում,  
մյուսներն ել տատանվում ելին վնասարարների ու  
Խորհրդային իշխանության միջնվ, շարունակելով աշ-  
խատել քիչ թե շատ լրյալ: Սակայն այստեղ խոսքը վե-  
րաբերում է վու թե մեծամասնությանը, այլ տեխնի-  
կական ինտելիգենցիայի ամենալորակալ մասին:

Ինչի՞ց ստեղծվեց վնասարարական շարժումը,  
ի՞նչն եր սնունդ տալիս նրան: Դասակարգային պայքա-  
րի սրումը ԽՍՀՄ-ում Խորհրդային իշխանության հար-  
ձակողական քաղաքականությունը քաղաքի և գյուղի  
կապիտալիստական տարրերի վերաբերմամբ, այդ տար-  
րերի դիմաղությունը Խորհրդային իշխանության  
քաղաքականությունը, միջազգային դրության բար-  
դությունը, կոլոնտեսական և խորհանակա-  
կան շնարարության դժվարությունները: Յեթե  
վնասարարների մարտական մասի ակտիվությունն  
ամրանում եր կապիտալիստական յերկրների  
իմպերիալիստների ինտելիգենցիոնստական դավե-  
րով, յերկրի հացահատիկային դժվարություննե-  
րով, ապա տեխնիկական ինտելիգենցիայի մյուս մասի  
տառանումները դեպի ակտիվ վնասարարները, ուժե-  
զանում ելին տրոցկիստական, մենշևիկյան շատախոս-  
ների մողայական դասարկախոսությամբ, թե «կը լոն-  
տեսություններից և թե խորհանականություններից  
միենույն և բան չի գուրս գա»՝ թե «Խորհրդային իշ-  
խանությունը միենույն և այլամերկում և և մոտ ժա-  
մանակում պետք է կործանվի», թե «բայլշեվիկներն ի-  
րենց քաղաքականությամբ նպաստում են ինտերվեն-  
ցիային», և այն, և այն: Բացի դրանից, յեթե նույնիսկ  
մի քանի հին բայլշեվիկներ՝ աջ ուկոնիստներից, չոխ-  
մացան հոսանքին, տատանվեցին այդ շրջանում կու-  
սակցությունից մյուս կողմը, ապա հիմք չկա զարմա-  
նալու, վոր հին տեխնիկական ինտելիգենցիայի վորոշ  
մասը, վորը դեռ բայլշեվմի հոտ ել չեր առել, նույն-  
պես տատանվեց «աստծո ոգնությամբ»: Հատկանալի  
յե, վոր այդ պայմաններում Խորհրդային իշխանու-

թյունը կարող եր միմիայն մի քաղաքականություն վարել հին տեխնիկական ինտելիգենցիայի նկատմամբ՝ ակտիվ վնասարարներին ջախջախելու, չեղոքների շերտավարման և լոյալների ներքորակման քաղաքականություն։ Այսպես եր յերկու տարի առաջ։

Կարելի՞ յե արդյոք առել, վոր ներկայումս մենք ճիշտ այլպիսի պայմաններում ենք։ Վոչ, չի կարելի։ Էնդհակառակը, այժմ մեղ մոտ միանդամայն տարբեր պայմաններ են ստեղծվել։ Մասնանշենք թեկուղ այն, վոր մենք ջախջախեցինք և հաջողությամբ հաղթահարում ենք քաղաքի ու դյուզի կազիտալիստական տարբերին։ Հարկավ այդ չի կարող ուրախություն պատճառել հին ինտելիգենցիային։ Շատ հայնական և, վոր նրանք գետ մինչեւ այժմ ել ցավակցություն են հայտնում իրենց ջախջախված բարեկամներին։ Մակայն չի պատահում այն, վոր համակրողները կամ առաջել ես չեղողներն ու տատանվողները կամ ավոր կերպով համաձայնեն յենթարկվել իրենց ակտիվ ընկերների ճակատագրին, յերբ վերջիններս դաժան, անուղղելի պարտություն են կրել։

Հետո, մենք հաղթահարեցինք հացի դժվարությունները, և վոչ միայն հաղթահարեցինք, այլև արտահանում ենք արտասահման այնպիսի քանակությամբ հաց, վորպիսին դեռ չելինք արտահանել Առրհբային իշխանության դոյության առբողջ ժամանակաշրջանում։ Հետեւապես վերանում և տատանվողների այդ «փաստարկումն» ես։ Ապա՝ այժմ նույնիսկ կույրերն ել տեսնում են, վոր կուտանտեսական ու խորհանտեսական շինարարության ճակատում, մենք վորշակի հաղթանակ տարանք, ձեռք բերինք մեծագույն հաջողու-

թյուններ։ Հետեւապես ջուրն ընկավ հին ինտելիգենցիայի դինանոցի ամենագլխավոր զենքը։ Ինչ վերաբերում ե բուրժուական ինտելիգենցիայի ինտերվենցիոն խստական ակնկալություններին, ապա պետք ե խոստովանել, վոր առայժմ դրանք դուրս յեկան առնվազն ավաղի վրա կառուցված տնակ։

Մեզ 6 տարի ինտերվենցիա յեն սպառնում, բայց վոչ մի անգամ չըլիմեցին ինտերվենցիայի։ Ժամանակ և խոստովանելու, վոր մեր խորատես բուրժուական ինտելիգենցիային պարզապես քթից բռնած ման եյին ածում։

Ես ել չեմ խոսում նրա մասին, վոր ակտիվ վնասարարների վարքագիծն Մոսկվայի հայտնի դատավարության ժամանակ պետք ե պատակերծ աներ և իրոք պսակաղերծ արավ վնասարարությունը։ Հասկանալի յե, վոր այդ նոր հանդամանքները չեյին կարող աղղեցություն չգործել մեր հին տեխնիկական ինտելիգենցիայի վրա։ Նոր պայմանները պետք ե ստեղծեյին և իրոք ստեղծեցին նոր տրամադրություններ, հին տեխնիկական ինտելիգենցիայի մեջ։ Խօսապես դրանով և բացարկվում այն փաստը, վոր առաջ վնասարարներին համակրող այդ ինտելիգենցիայի վորոշ մասը Խորհրդային իշխանության կողմը գալուստու վորոշ նշաններ ե ցույց տալիս։ Այն փաստը, վոր վոչ միայն հին ինտելիգենցիի այդ խավը, այլև յերեկվա վորոշակի վնասարարները, յերեկվա վնասարարների զգալի մասը բանվոր դասակարգի հետ միասին սկսել և աշխատել մի շարք գործարաններում, այդ փաստն անտարեկույս վկայում ե, վոր հին տեխնիկական ինտելիգենցիայի շարքերում արդեն զըմադարձ ե սկսվել։

Հարկավ այդ չեն նշանակում, վոր մեղ մոտ այլևս վնասարար չկա: Վնասարարներ կան և կլինեն քանի մենք դասակարգեր ունենք, քանի կա կապիտալիստական ըրտապատ: Մակայն այդ նշանակում ե, քանի վոր առաջ վնասարարներին այսպես կամ այնպես համակարող էին տեխնիկական ինտելիգենցիայի զգալի մասն այժմ շրջադարձ ե կատարել դեպի Խորհրդային իշխանությունը, քիչ են մնացել ակտիվ վնասարարներ, նրանք մեկուսացված են, և մի առ ժամանակ ոտիսլված կլինեն թագումիւլ խորը ընդհատակում:

Բայց սրանից հետեւում ե, վոր դբան համապատասխան պետք ե փոխվի մեր քաղաքականությունը հին տեխնիկական ինտելիգենցիայի վերաբերմամբ: Յեթի վնասարարության յեռուն շրջանում մեր վերաբերմունքը դեպի հին տեխնիկական ինտելիգենցիան արտահայտվում եր դիմուրապես ջախճախրան քաղաքականությամբ, ապա այժմ, այդ ինտելիգենցիայի դեպի Խորհրդային իշխանությունը կատարած շրջադարձի շրջանում, մեր վերաբերմունքը դեպի նա պետք ե արտահայտվի գլխավորապես ներգրավիլու և նրա մասին հոգ տանելու քաղաքականությամբ: Միայն և վոչ դիմուրական կլիներ շարունակել հին քաղաքականությունը փոխված նոր պայմաններում: Հիմարություն՝ և անխելություն կլիներ այժմ հին դպրոցի սպառկանող դրեթե ամեն մի մասնագետի և ինժեների վրա նայել վորպես չընելած հանցագործի և վնասարարի: «Ազեղակերությունը» մեղ մոտ միշտ համարվել ե և մնում վնասակար և ամոթալի յերելույթ:

Ուրեմն, փոխել վերաբերմունքը դեպի հին դպրոցի ինժեներատեխնիկական ուժերը, ցույց տալ նրանց

հանդեպ ավելի ուշադրություն և հոգատարություն, ել ավելի համարձակ ներգրավել նբանց աշխատանքի այս և ինդիրը: Այս մեր արդյունաբերության զարգացման հինդերորդ նոր պայմանը:

Անցնենք վերջին պայմանին:

#### 6. ՏԵՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Պատկերը լրիվ չեր լինի, յեթե յետ չխոսեյի ելի մի պայմանի մասին: Խոսքը վերաբերում է արդյունաբերության և ժողովրդական անտեսության համար կուտակման աղբյուրներին և այդ կուտակման տեմպերի ուժեղացմանը:

Վո՞րն ե նորը և հատկանշականը մեր արդյունաբերության զարգացման մեջ՝ կուտակման տեսակետից: Այն, վոր կուտակման հին աղբյուրները այլևս բարձական չեն արդյունաբերության հետաղած ծավալման համար: Այն, վոր հետեւաբար անհրաժեշտ ե վորոնել կուտակման նոր աղբյուրներ և ուժեղացնել հները, յեթե մենք իրոք ցանկանում ենք պահպանել և զարգացնել ինդուստրացման բայլը վեկյան տեմպերը:

Կապիտալիստական յերկրների պատմությունից հայտնի յե, վոր ինդուստրիան ավելի բարձր աստիճանի հասցնել ցանկացող վոչ մի յերիտասարդ պետություն չի կարողացել զլուխ պահել առանց դրսի ողնության, առանց յերկարատև վարկերի կամ փոխառությունների: Յելնելով դրանից՝ կապիտալիստական յերկրները կտրականապես մերժեցին վարկ և փոխառություն տալ մեր յերկրին, յենթադրելով, թե վարկերի ու փոխառությունների բացակայությունը կառնեցնի մեր յերկրի ինդուստրացումը: Կապիտալիստ-

ները սխալվեցին : Նրանք հաշվի չտուան այն հանգա-  
մանքը, վոր մեր յերկիրն ի տարբերություն կապիտա-  
լիստական յերկրներից, ունի կուտակման մի քանի հա-  
սուկ աղբյուրներ, վորոնք բավական են վերականգնե-  
լու և ել ավելի դարձայնելու մեր ինդուստրիան :

Յեվ հերավի, մենք վոչ միայն վերականգնեցինք  
դյուզատնտեսությունն ու տրանսպորտը, այլև կարո-  
ղացանք սելսերի վրա դնել ծանր արդյունաբերության,  
դյուզատնտեսության և տրանսպորտի վերակառուց-  
ման վիթխարի գործը : Հասկանալի յէ, վոր այդ գործի  
վրա ծախսվեցին տասնյակ միլիարդ ռուբլիներ : Վոր-  
տեղից եյին ստեղծվում այդ միլիարդները : Թեթև  
արդյունաբերությունից, դյուզատնտեսությունից և  
բյուջետային կուտակումներից :

Այդպես եր ընթանում մեղ մոտ գործը մինչև վեր-  
շին ժամանականերս : Միանգամայն այլ վիճակի մեջ  
և գործը ներկայումս : Յեթե առաջ կուտակման հին  
աղբյուրները հերիք եյին արդյունաբերությունն ու  
տրանսպորտը վերակառուցելու համար, ապա այժմ  
դրանք չեն բավականանում : Ներկայումս խոսքը վե-  
րաբերում ե վոչ թէ հին արդյունաբերությունը վերա-  
կառուցելուն : Խոսքը վերաբերում ե Ռուսական, Սիրի-  
արում, Ղազախստանում տեխնիկապես զինված նոր  
արդյունաբերություն ստեղծելուն : Խոսքը վերաբերում  
ե ԽՍՀՄ-ի հայահատիկային, անասնաբուժական և  
հումույթային ըրչաններում նոր խոշոր գյուղատնտե-  
սական արտադրություն ստեղծելուն : Խոսքը վերաբե-  
րում ե ԽՍՀՄ-ի Արևելյան ու Արևմտյան մասի միջև  
յերկաթուղային նոր ցանց ստեղծելուն : Հասկանալի  
յէ, վոր կուտակման հին աղբյուրները չեն կարող բա-

վականանալ այդ վիթխարի գործին : Սակայն այդ դեռ  
լուսոր չե : Դրան պետք ե ավելացնել նաև այն հանգա-  
մանքը, վոր չնորհիվ գործը անտեսեավար կերպով կա-  
տարելու, տնտեսական հաշվարկի սկզբունքները բոլո-  
րովին խախտմիցին, մեր մի շարք ձեռնարկություննե-  
րում և տնտեսական կազմակերպություններում արդեն  
վաղուց դադարել ե ին հաշվել, կալիուլացիայի յեն-  
թարկել, թվերով հիմնավորել յեկամուտներն ու ծախ-  
սերը, կազմել նրանց հաշվեկշիռը : Փաստ ե, վոր մի  
շարք ձեռնարկություններում և տնտեսական կազմա-  
կերպություններում «խնայողության ուժիմը» «վոչ  
արտադրական ծախսերի կրծառակմը», «արտադրու-  
թյան ուացիոնալացումը» հասկացողությունները ար-  
դեն վաղուց մողայից ընկել եյին : Ակնհայտորեն նը-  
րանք հույս ունեյին, թե բանկը «միևնույն ե՝ անհրա-  
ժեշտ գումարներ կտա մեղ» :

Փաստ ե, վոր վերջին ժամանակներս մի շարք ձեռ-  
նարկություններում ինքնարժեքն սկսել եր բարձրա-  
նալ : Նրանց առաջադրանք ե տրված 10 և ավելի տոկո-  
սով իջեցնել ինքնարժեքը, իսկ նրանք բարձրացնում  
են : Ի՞նչ ե նշանակում իջեցնել ինքնարժեքը : Դուք զի-  
տեք, վոր ինքնարժեքի իջեցման ամեն մի տոկոս նշա-  
նակում ե 150—200 միլիոն ոռոր . կուտակում արդյու-  
նարկության մեջ : Պարզ ե, վոր այդ պայմաններում  
բարձրացնել ինքնարժեքը նշանակում ե հարյուրավոր  
միլիոն ոռորիներ կորցնել արդյունաբերության հա-  
մար, ամբողջ ժողովրդական տնտեսության համար :

Այդ բոլորից հետեւում ե, վոր այլևս չի կարելի

դործը տանել միմիայն թեթև արդյունաբերությամբ, միմիայն բյուջետային կուտակումներով, միմիայն գյուղատնտեսության յեկամուտներով:

Թեթև արդյունաբերությունը կուտակման մեծագույն աղբյուր է, նա բոլոր շանսերն ունի ել ավելի զարգանալու, սակայն այդ աղբյուրն անսահման չե: Գյուղատնտեսությունը վոչ պակաս հարուստ աղբյուր է կուտակման համար, սակայն այժմ իր վերակառուցման շրջանում նա ինքը կարիք ունի պետության Փենանսական ոգնության: Ինչ վերաբերում ե բյուջետային կուտակումներին, դուք ինքներդ գիտեք, վոր նըրանք չեն կարող ե չպետք ե անսահման լինեն:

Ինչ ե մնում ուրեմն: Մնում ե ծանր արդյունաբերությունը: Հետեւապես պետք ե միջոցներ գտնել, վոր ծանր արդյունաբերությունը՝ նախ և առաջ մեքենաշինությունը նույնպես կուտակումներ տա: Հետեւապես ուժեղացնելով և ծավալելով կուտակման հին աղբյուրները, պետք ե ստեղծել այնպիսի պայմաններ, վոր ծանր արդյունաբերությունը՝ նախ և առաջ մեքենաշինությունը նույնպես կուտակումներ տա:

Այդ ե յելքը:

Իսկ ինչ ե պահանջվում գրա համար: Վոչնչացնել անտնտեսավարությունը, մորիլիզացիայի յենթարկել արդյունաբերության ներքին միջոցները, արմատացնել և ամրացնել մեր ձեռնարկություններում տնտեսական հաշվարկը, սիստեմատիկաբար իջեցնել ինքնարժեքը, ուժեղացնել արդյունաբերական ներքին միջոցների կուտակումն առանց բացառության բոլոր ձյուղերում: Այդ ե յելքի ուղին:

Այդպիս ուրեմն արմատացնել և ամրացնել տնտեսական հաշվարկը, բարձրացնել արդյունաբերուր յան ներքին միջոցների կուտակումը—այդ և խղդիրը:

## 7. ՆՈՐ ԶԵԿՈՎ ԱՇԽԱՏԵԼ ՆՈՐ ԶԵԿՈՎ, ԴԵԿԱՎԱՐԵԼ

Սրանք են, ընկերներ, մեր արդյունաբերության զարգացման նոր պայմանները: Այդ նոր պայմանների նշանակությունն այն է, վոր նրանք իրերի նոր դրություն են ստեղծում արդյունաբերության համար, վորոնք պահանջում են աշխատանքի նոր սրբիումներ, դեկավարության նոր պրիումներ: Այդպես ուրեմն՝

ա) Պարզվում է, վոր այլևս չի կարելի հույս դնել առաջվա նման բանվորական ուժի ինքնահոսի վրա: Արդյունաբերությունը բանվորական ուժով ապահովելու համար այժմ բանվորական ուժ պետք ե հավաքագրել կազմակերպված ձեռվ, պետք ե մեքենայացնել աշխատանքը: Կարծել թե կարելի յե գործն առաջ տանել առանց մեքենայացման՝ աշխատանքի մեր ընդունած տեմպի, արտադրության ներկա մասներում, նշանակում ե հույս ունենալ, վոր կարելի յե գդալով դատարկել ծովը:

բ) Ապա պարզ ե, վոր այլևս չի կարելի հանդուրժել արդյունաբերության մեջ բանվորական ուժի հոսանքությանը: Այդ չարիքից աղատվելու համար պետք ե նոր ձեռվ կազմակերպել աշխատավարձը: Քիչ թե շատ մշտական պետք ե դարձնել բանվորների կազմը ձեռնաբերկություններում:

գ) Ապա պարզ ե, վոր չի կարելի այլևս հանդուր-

ժել գիմաղրկությունն արտադրության մեջ։ Այդ չարեխեց աղատովելու համար պետք է նոր ձևով կազմակերպել աշխատանքը, պետք է ուժերը դասավորել այնպիս, վոր բանվորների յուրաքանչյուր խումբ պատասխանառու լինի մեքենաների, դադայաճների աշխատանքի համար, աշխատանքի վորակի համար։

Դ) Ազա պարզ ե, վոր հնարավոր չե այլևս առաջվա նման դործը տանել ինժեներա-տեխնիկական այն նվազագույն հիմ ուժերով, վոր ժառանդել ելինք մենք բուրժուական Ռուսաստանից։ Ներկա տեմպով, արտադրության ներկա մասշտաբով առաջ գնալու համար պետք է պայմաններ ստեղծել, վոր բանվոր դասակարգն ունենա սեփական արտադրական տեխնիկական ինտելիգենցիա։

Ե) Այնուհետև պարզ ե, վոր չի կարելի առաջվա նման միենաւին չափանիշով մուտքալ հին դաշտոցի բոլոր մասնագետների ինժեներա-տեխնիկական ուժերին։ Հաշվի առնելով փոխված պայմանները՝ պետք է փոխել մեր քաղաքականությունը և առավելադույն հոգատարություն ցուցաբերել այն մասնագետների, ինժեներա-տեխնիկական ուժերի նկատմամբ, վորոնք վորոշակի դարձնում են իրենց յերեսը դեպի բանվոր դասակարգը։

Ղ) Վերջապես պարզ ե, վոր չի կարելի առաջվա նման դործը տանել կուտակման հին աղբյուրներով։ Արդյունաբերության և գյուղատնտեռության հետադա ծալալումն ապահովելու համար պետք է պայմաններ ստեղծել կուտակման նոր աղբյուրներ գործի դնելու, անոնտեսավարությունը վերացնելու, անտեսական հաշվարկն արմատացնելու, ինֆնարժեքն իջնենելու,

արդյունաբերության ներքին կուտակումներն աղելայ-նելու համար։ Մրանք են արդյունաբերության զարգացման այն նոր պայմանները, վորոնք պահանջում են աշխատանքի նոր յեղանակներ, տնտեսական շինարարության զեկավարման նոր պրիորներ։

Ի՞նչ և անհրաժեշտ զեկավարությունը նոր ձևով կազմակերպելու համար։ Դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է, վոր մեր տնտեսական զեկավարները հասկանան նոր իրագրությունը, կոնկրետ կերպով ուսումնասիրն արդյունաբերության զարգացման նոր պայմանները և վերակազմեն իրենց աշխատանքը նոր պայմանների պահանջների համաձայն։

Դրա համար ազա անհրաժեշտ է, վոր մեր տնտեսավարները ձեռնարկությունները զեկավարեն վոչ թե «ընդհանուր կերպով», վոչ թե «ողից», այլ կոնկրետարար, առարկայորեն, վոր նրանք յուրաքանչյուր հարցին մատենան վոչ թե ընդհանուր շաղակրատությամբ, այլ խիստ զործնականորեն, վոր նրանք չսահմանափակվեն թղթե գրություններով կամ ընդհանուր ֆրազներով ու լողունդներով, այլ թափանցենգործի տեխնիկայի մեջ, մանրամասնությունների մեջ, թափանցեն «մանրութի մեջ», վորովհետև «մանրութից» այժմ կառուցվում են մեծ զործեր։

Ազա դրա համար անհրաժեշտ է մեր յերեմն 100—200 ձեռնարկություն ունեցող ներկայիս ծանրաշարժ միավորներն անհապաղ փոքրացնել և բաժանել մի քանի միավորների։ Հասկանալի յէ, վոր հարյուրավոր և ավելի գործարանների հետ գործ ունեցող միավորման նախագահը չի կարող ինչպես հարկն և ծանոթ լինել այդ դորժարաններին, նրանց հնարավորու-

թյուններին և աշխատանքին : Հասկանալի յէ , վոր ծանոթ չիմնելով գործարաններին , նա ի վիճակի չի լինի դեկտվարել նրանց :

Հետևաբար վորպեալի հնարավորություն տանք միավորների նախագահներին ինչպես հարկն և ուսումնասիրելու և զեկավարելու գործարանները , պետք ե աղասոել նրանց գործարանների մի մասից , պետք ե միավորները բաժանել մի քանի միավորների , մոտեցնել այդ միավորները գործարաններին :

Այսուհետեւ դրա համար անհրաժեշտ է , վոր մեր միավորներն անցնեն կոլեգիալ կառավարումից միանձնյա կառավարման : Ներկայումս միավորման կողեղիայում նստած է 10—15 հոգի . նրանք թղթեր են գրում , դիսկուսիա յեն անում : Այլևս չի կարելի ընկերներ , այդպես կառավարել : Պետք ե վերջ տալ թղթե «ղեկավարմանը» , անցնել իրական , գործնական բայլչեկան աշխատանքի : Թող միավորման վարչության մեջ մնան միավորման նախագահը և մի քանի տեղակալներ : Նրանք միանդամայն բայկական են միավորումը կառավարելու համար : Կուեգիայի մյուս անդամներին ամելի լավ կլիներ իջեցնել ցածր՝ գործարանները . այդ շատ ամելի լավ կլիներ նրանց համար :

Ապա դրա համար անհրաժեշտ է , վոր միավորների նախագահները և նրանց տեղակալաներն ավելի հաճախ ըջագայն գործարանները , ավելի յերկար մնան այստեղ , ավելի մոտից ծանոթանան գործարանի աշխատողների հետ և վոչ միայն սովորեցնեն տեղական մարդկանց , այլև սովորեն նրանցից : Կարծել , վոր այժմ կարելի յէ գրասենյակում , գործարանից հեռու նստած

ղեկավարել , նշանակում ե մոլորության մեջ լնկնել : Գործարանները ղեկավարելու համար պետք ե ավելի հաճախ շփումն ունենալ ձեռնարկության աշխատողների հետ , պետք ե կենդանի կապ պահպանել նրանց հետ :

«Երջապես» յերկու խոսք մեր 1931 թվականի արտադրական պլանի մասին : Կան մի քանի մերձմկուսակցական քաղքենիներ , վորոնք հավատացնում են , թե մեր արտադրական ծրագիրն իրական չե , իրազործելի չե :

Դա նման է վորով չափով Շչեղըինի «զերիմաստուն խարակաձներին» , վորոնք միշտ պատրաստ են իրենց շուրջը տարածել «թերամտության դատարկությունը» : Մեա՞լ ե արդյոք մեր արտադրական ծրագիրը : Անպայման այս : Նա ուեալ ե թեկուզ այն պատճառով , վոր կան նրա իրականացման բոլոր անհրաժեշտ պայմանները : Նա ուեալ ե թեկուզ այն պատճառով , վոր նրա իրականացումն այժմ կախված է բացառապես մեղանից , մեր ունեցած մեծագույն հնարավորություններն ոգտագործելու մեր կարողությունից և ցանկությունից : Այլ կերպ ինչպես բացատրել այն փաստը , վոր արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ և ճյուղեր արդեն գիրակատարել են պլանը : Հիմարաւթյուն կլիներ կարծել , վոր արտադրական պլանը թվերի ու առաջարարների մի ցուցակ է : Իրոք արտադրական պլանը միլիոնավոր մարդկանց կենդանի գործնական աշխատանքն է : Մեր արտադրական պլանի իրական լինելը — նոր կյանք ստեղծող միլիոնավոր աշխատավորներն են : Մեր ծրագրի իրական լինելը — մենք ենք ձեզ հետ , նոր ձեռնով աշխատավորներն են :

կամքն ե , մեր պատրաստակամությունը , պլանը կա-  
տարելու մեր վճռականությունն է :

Ունե՞նք արդյոք մենք պլանը կատարելու գնա-  
կանությունը : Այո՛ , ունենք : Հետևապես մեր արտա-  
գրական ծրագիրը կազմի չէ և պետք է իրագործել :  
(Յերկարածմ ծափակարություններ) :



30

ՀՅ Ազգային գրադարան



NL0935365

1931/425

№ 26 10 400. (1½ д.)

1

2926



И. СТАЛИН

НОВАЯ ОБСТАНОВКА—НОВЫЕ ЗАДАЧИ  
ХОЗЯЙСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА

Госиздат ССР Армении  
Эризанъ—1931